

ԻՄԱՍՏՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆ

Լ. Կասսանի

Իմաստուն դերվիշ Իբն-Ալլահը նստել էր բարձր մզկիթի ստուերում և իւր աչակերտներին իմաստութիւն էր քարոզում, որոնք հետաքրքրութիւնից շարժուած, տալիս էին նրան զանազան հարցմունքներ:

Այդ միջոցին, մզկիթի մօտից անցնում էին մի քանի հարուստ դատարկապորտ քերիտասարդներ, որոնք տեսնելով ծերունի իմաստունին, սկսեցին ծաղրել նրան: Իբն Ալլահը համբերութեամբ տանում էր նոցա արհամարհական վարմունքը, սակայն այդ յանդուգն քերիտասարդներից մինը, որի անունն էր Էլ-Ջօրիդ, կամենալով ծերունուն համբերութիւնից հանել՝ դիմեց նրան հետևեալ խօսքերով:

— Էնթէ դու իրաւ իմաստուն ես, պատասխանիր հետեւեալ երեք հարցիս:— Առաջին՝ ինչպէս ես համարձակուում հաստատել, թէ գոյութիւն ունի ամենակարող Ալլահը, որին՝ երբեք ոչ մի մարդ չէ տեսել— իսկ ինչ որ չեն տեսել, նրան չեն հաւատում:— Երկրորդ՝ ինչո՞ւ դու յանդիմանում ես մարդկանց վատ բարքերի համար. եթէ Ալլահը նրանց ստեղծել է փուչ և անբարոյական, նրանք պիտի ապրեն և գործեն այնպէս, ինչպէս ցանկանում են: Ոչոք իրաւունք չունի և չը պէտք է վրտահանայ յանդիմանելու նրանց որ և իցէ դէպքում:— Երրորդ՝ խնդրեմ, ինչ բացատրես թէ, ինչպէս սատանան կարող է տանջուել դժողքի կրակում, քանի որ, Ղուրանն անգամ հաստատում է, որ նա կրակից է ստեղծուած. միթէ կրակը կարող է վնասուել կրակից:»

Իբն-Ալլահը ամբողջ ժամանակ լուռ էր, ուստի՝ Էլ Ջօրիդը կրկնեց նորից իւր հարցերը. բայց դարձեալ պատասխան չը ստանալով, սկսեց ծաղրել դերվիշի իմաստութիւնը:

Այն ժամանակ, վերջինը, առաջուայ նման լուռ կերպով

վերցրեց մի կոշտ հող և այնպիսի ոյժով խփեց երեսասարդի գլխին, որ նրա չալման (գլխի փաթաթան) գլորուեց գետին։

Մի քիչ յետոյ, Էլ-Ջօրիդը սթափուելով վախից և ցաւից, իսկոյն ընկերներէ հետ միասին գնաց դադիի (դատաւոր) մօտ. բայց, դադին լինելով արդարասէր և անկաշառ բնաւորութեան տէր մարդ, կանչեց դատի և մեղադրեալին. ուստի, Էլ-Ջօրիդը ստիպուած էր նորից, նրա ներկայութեամբ, կրկնել իւր հետ պատահած դէպքը և ի միջի այլոց աւելացրեց—թէ իւր գլուխը սաստիկ ցաւում էր խփելու ըոպէին։

Նրբոր Էլ-Ջօրիդը վերջացրեց իւր խօսքերը, Իբն Ալլահը ժպտալով չփեց իւր երկար մորուքը և դիմեց դադիին այս խօսքերով։

—«Արդարասէր դադի, ես, չպրտելով հողի կոշտը, երբէք մտադիր չէի վիրաւորելու ազնիւ Էլ-Ջօրիդին. ևս առաւել ամենկին չէի կամենում պատճառել որ և իցէ ցաւ, այլ ես դրանով միայն պատասխանեցի նրա տուած ստիպողական հարցերին»։

Ղադին և Էլ-Ջօրիդը զարմացմամբ նայում էին դերվիշին։

—0! Ղադի չարունակեց ծերունին.—*Նախ եւ առաջ՝ միթէ կարող էր ցաւել Էլ-Ջօրիդի գլուխը և միթէ դո՛ւ, կամ մի ուրիշը տեսել է նրա գլխի ցաւը. ես գոնէ չեմ տեսել—*իսկ ինչ որ չեմ տեսել, այն բանին չեմ հաւատում։ *Դրանից յետոյ Էլ-Ջօրիդը ինչ իրաւունք ունի գանգատուելու ինձ վերայ, քանի որ, Ալլահն ինձ ստեղծել է այդպէս և ես վարուել եմ, ինչպէս ինձ ցանկալի է։ - Եւ վերջապէս՝ միթէ մենք հողից չենք ստեղծուած և միթէ հողը կարող է ցաւեցնել հողին, չէ՞ որ ես նրան խփել եմ նոյն հողով»։*

Ղադին մի քիչ մտածելուց յետոյ ասաց դերվիշին. «հշմարիտ ես ասում Իբն-Ալլահ—քեզ, իզուր տեղը չեն կոչում իմաստուն. գնան դո՛ւ արդար ես։ Ապա դառնալով Էլ-Ջօրիդին, աւելացրեց. իսկ դո՛ւ, յանդո՛ւզն—անամօթ, լիովին արժանի ես ստացածդ պատժին—գնան կորի՛ր և միւս անգամ աւելի զգոյշ եղի՛ր»։

Թարգմ. Ֆ. Առաք